

ՈՒՍՈՒՄՆԱԴՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ԶԵՂՉՄԱՆ ԿԱՐԳ

Ուսումնառության պայմանագրով սահմանված վճարների չափը հաստատում է կրթահամալիրի խորհուրդը կրթահամալիրի տնօրենի ներկայացմամբ:

Ուսումնառության պայմանագրով սահմանված վճարը կարող է զեղչվել կրթահամալիրի մասնաճյուղի ղեկավարի ներկայացմամբ՝ կրթահամալիրի տնօրենի հրամանով:

Ուսումնառության պայմանագրով սահմանված վճարները զեղչում է.

- նախակրթարանում (ամսական 20,000 դրամի փոխարեն վճարի չափը սահմանվում է 13,000 դրամ)
 - ✓ երբ սանը կրթահամալիրի աշխատողի երեխա է
 - ✓ երբ սանի քույր-եղբայրը սովորում է կրթահամալիրի 1-12-րդ դասարաններում
- դպրոցում
 - ✓ ընտանիքից կրթահամալիրի 1-12-րդ դասարաններում սովորող 3 երեխայի դեպքում ամբողջությամբ զեղչվում է ավագ երեխայի ուսումնառության վճարը
 - ✓ ընտանիքից կրթահամալիրի 1-12-րդ դասարաններում սովորող 4 երեխայի դեպքում ամբողջությամբ զեղչվում է 2 ավագների ուսումնառության վճարը
 - ✓ սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքի երեխայի վճարը
- փոխադրման ծառայություն
 - ✓ ընտանիքից կրթահամալիրի փոխադրման ծառայությունից օգտվող 3-4 երեխայի դեպքում ամբողջությամբ զեղչվում է մեկ երեխայի վճարը